ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 2067-Ն

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՃՅՈՒՂԱՅԻՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասը և 59.1-ին հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի հաշվառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի 1-ից:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված հանրապետական, ճյուղային կամ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կողմերից մեկը կարող է այն ներկայացնել հաշվառման (այդ մասին միաժամանակ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին)՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, որի համար կոլեկտիվ պայմանագրերի հաշվառումն իրականացնող տեսչական մարմին է ներկայացվում

դիմումը (սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներին համապատասխան) և կոլեկտիվ պայմանագիրը (իսկ դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ կոլեկտիվ պայմանագրի ստորագրված և էլեկտրոնային պատկերատպված (սկանավորված) օրինակը), իսկ հաշվառումն իրականացվում է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի համաձայն:

4. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կողմերից մեկը կարող է այն ներկայացնել հաշվառման (այդ մասին միաժամանակ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին)՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, որի համար կոլեկտիվ պայմանագրի հաշվառումն իրականացնող տեսչական մարմին է ներկայացվում դիմումը (սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներին համապատասխան) և կոլեկտիվ պայմանագիրը (իսկ դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ կոլեկտիվ պայմանագրի ստորագրված և էլեկտրոնային պատկերատպված (սկանավորված) օրինակը), իսկ հաշվառումն իրականացվում է սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ